

ԼԻԲԱՆԱՆ ԿԸ ՄԵՐԺԷ ԱՀԱՐԵԿԶՈՒԹԻԻՆԸ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ

Նախագահ Գոր. Էմիլ Լահուտ երկվ զերահաստատեց, թէ Լիբանան կը մերժէ ու կը դատապարտէ ահաբեկչութեան բոլոր ձեւերը եւ շահագրգռուած է՝ մասնակցելու անոր դէմ պայքարին ՄԱԿի շրջապիւծին ներս եւ միջազգային օրէնքի հիմամբ:

Նախագահը նաեւ զերահաստատեց, թէ անհրաժեշտ է իրարմէ զանազանել ահաբեկչութիւնն ու դիմադրութիւնը: «Լիբանան չի կրնար ընդունիլ ժողովուրդներու օրինական իրաւունքներու անտեսումը, Շարք՝ էջ 2

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԵՒ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ



Առաջնորդ սրբազան Գոր. (Լուսանկարները՝ Պ. ԶԱՆՈՒԿԵԱՆԻ)

Հայաստանի Ազգային Ժողովի ներքին եւ պաշտպանութեան խանութներու խորհուրդի նախագահ եւ Հ. Յ. Գ. Բիւրոյի անդամ Վահան Յովհաննիսեան, ըկերակցութեամբ Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական



Այցելութիւն՝ քաղաքապետարան:

Կոմիտէի ներկայացուցիչ Յ. Միխայիլեանի, Կեդրոնական Կոմիտէի անդամներ՝ Յ. Թիւրքեանի եւ Ն. Պարսումեանի, ինչպէս նաեւ դեսպան Ա. Նաւասարդեանի, երկէ այցելեց Լիբանանի Հայոց թեմի



Շաղկեպակի գետնորմ:

առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեանին: Խօսակցութիւնները ընդգրկեցին Հայաստան - Սփիւռք յարաբերութիւնները, ինչպէս նաեւ Լիբանանի գաղութին վերաբերող հարցեր:

Ապա Վահան Յովհաննիսեան ընկերակցութեամբ Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի պատուիրակութեան եւ դեսպան Ա. Նաւասարդեանի, այցելեց Պուրճ Համուտի քաղաքապետարան, ուր հանդիպում ունեցաւ քաղաքապետ Ա. Մաքրիեանի եւ քաղաքապետական խորհուրդի անդամներուն հետ:

Քաղաքապետարանի հանդիպումէն ետք, Վ. Յովհաննիսեան եւ իրեն ընկերակցող պատուիրակութիւնը այցելեցին Լիբանանի քաղաքացիական պատերազմին ընթացքին հայ ժողովուրդի պաշտպանութեան ի խնդիր գոհուած հայորդիներուն նուիրուած Պուրճ Համուտի յուշակոթողը, ուր Վ. Յովհաննիսեան ծաղկեպսակ մը վետեղեց նահատակներուն յիշատակին:

ԱՐԱՅԱԹ - ՓԵՐԷՍ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ Ի ՎԵՐՋՈՅ ԿԱՅԱՅԱԻ

ՀԱՄԱՋԱՅՆՈՒԹԻՒՆ ԳՈՅԱՑԱԻ ԱՊԱՇՏՈՎԱԿԱՆ ՄԱՐԶԻՆ ՄԷՋ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաթ Արաֆատ եւ Իսրայէլի արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէս երկէ համաձայնեցան մնալուն ու կայուն պինդութիւն մը, որ կրնայ նպաստել հակաահաբեկչութեան համաշխարհային ճակատ մը կազմելու ամերիկեան ճիգերուն:

Երկար ատենէ սպասուած եւ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի կողմէ երեք անգամ ջնջուած հանդիպումը ի վերջոյ տեղի ունեցաւ երկէ. Կապալի օդակայանին մէջ: Միացեալ Նահանգներ ճնշումներ

բանեցուցած էին Շարոնի վրայ. որպէսզի արտօնէ հանդիպումը: Փերէս, իր կարգին, սպասնացած էր իրաւարի Շարոնի կառավարութեանէն. եթէ Արաֆատի հետ հանդիպումը տեղի չունենայ:

Հանդիպումին ընթացքին, Փերէս ու Արաֆատ վերահաստատեցին իրենց լանձնառութիւնը պինդութիւն մը միջոցով բանակցութիւններու վերսկսելու ծրագրին հանդէպ. որ առիթ կու տայ Իսրայէլի կողմէ պահուած շրջաններուն դէմ հաստատուած պատժամիջոցներու մեղմացման ու անկողնի ջնջումին: Հանդիպում

մի աւարտին սակայն Արաֆատ ու Փերէս մամուլ միացեալ ատուիւ մը չտուին. որչա՛յ յայտարարութիւններ կատարեցին: Իսրայէլեան լրատուական աղբիւրներուն հաղորդած լուրերուն համաձայն, հանդիպումը լարուած մթնոլորտի մը մէջ տեղի ունեցած է:

Պաղեստինեան իշխանութեան կառավարութեան անդամ Սաէպ Ուրալթաթ ըսաւ, որ հանդիպումին ընթացքին համաձայնութիւն գոյացաւ վերսկսելու ապահովութեան մարզի մէջ ամբողջական գործակցութեան: Ան աւելցուց, որ երկու կողմէ

Շարք՝ էջ 2

ԱՇԽԱՐՀ ԿՐՆԱՅ ԶԱԲԱԶԱԿԱՆ ՔԱՆԴՈՒՄԻ ԶԵՆՔԵՐՈՎ ԶԻՆՈՒԱԾ ԱՅԱՐԵԿԻՉՆԵՐՈՒ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ ԴԻՄԱԳՐԱԲԵԼ

ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԵ ՈՒՎՇԻՆԿԹԸՆ

Մ. Նահանգներ երէկ զգուշացուցին ՕԹԱՆԻ իրենց դաշնակիցները, թէ աշխարհ հաւաքական քանդումի գէնքերով գինուած «հաբեկիչներու» յարձակումներ կրնայ դիմագրաւել, որովհետեւ անոնց ապստան տուող պետութիւնները նման գէնքեր կը մշակեն:

Պաշտպանութեան փոխնախարար Փոլ Ուոլֆօրթը որեւէ պետութիւն չէ նշած, սակայն Ուաշինկթըն իրանը, Իրաքը, Սուրիան եւ Լիպիան հաբեկչութիւն հովանաւորող երկիրներու շարքին կը դասէ եւ կ'ըսէ, թէ անոնց մէկ քանին կորիզային, կենսաբանական կամ քիմիական գէնքեր կը մշակեն:

ՕԹԱՆԻ ընդհանուր քարտուղար Ճորճ Ռոպերթսըն Պրիւքէլի մէջ միօրեայ ժողովին բացումը կատարած էր՝ Ուաշինկթընի եւ Նիւ Եորքի մէջ հաբեկչական արարքները «ուղղակի սպառնալիք մը» կոչելով միջազգային խաղաղութեան եւ ապա-

հովութեան: Ուոլֆօրթը միւս 18 դաշնակիցներուն որեւէ առաջարկ չէ կատարած եւ շեշտած է, թէ գինուորական ընտրանքները մէկ փոքր մասը կը կազմեն միայն հաբեկչութեան դէմ պայքարի նախագահ Ճորճ Պուլֆօրթին աջակցող ռազմավարութեան:

Մինչ այդ, Աֆղանիստանի իշխող թաւեպան շարժումին գերագոյն դեկավարը՝ մոլլա Մոհամադ Օմար երէկ ըսած է, թէ ամերիկեան յարձակումը մը նուազ հաւանականութիւն կը տեսնէ, նկատի ունենալով, որ Ուաշինկթըն որեւէ

փոստ չունի, թէ Ուսամա Պըն Լադէն մեղսակից է:

Ան նաեւ կող ուղղած է դէպի սահման խոյս տուող հազարաւոր աֆղաններուն, որ իրենց երկիրը վերադառնան:

Աֆղանիստանի մայրաքաղաք Քապուլի մէջ երէկ ցուցարարներ կրակի տուած են ամերիկեան դեսպանատունը, որ 1989էն ի վեր լքուած է Ուաշինկթընի կողմէ:

Տասնեակ հազարաւոր աֆղաններ դատապարտած են հաւանական յարձակում մը, յայտարարելով, թէ զօրավիդ

Շարք՝ էջ 10

«ՀԱՅ - ԹՐԵԱԿԱՆ ԶԱՇՏՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ»Ի Բ. ԶԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԱՅԱՑԱԻ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

«Հայ - Թրքական Հաշտութեան Յանձնաժողով»ը իրապարակեց յայտարարութիւն մը, ուր նշեց, թէ 10 ամիսները 23էն 25 Սեպտեմբերին հանդիպում ունեցած են Պոլսոյ մէջ: Ժողովը արժեւորած է Հայաստանի, Թուրքիոյ եւ միջազգային հանրութեան անդրադարձը՝ «յանձնաժողով»ի կազմութեան եւ գործունէութեան: «Յանձնաժողով»ը նկատած է, թէ «յանձնաժողով»ի անդամներուն վերագրուած կարգ մը յայտարարութիւնները շփոթ յառաջացուած են: Որդեգրուած են լրատուամիջոցներու հետ հաղորդակցութեան սկզբունքներ:

Շարք՝ էջ 10

ՅԱԻԱԿՑԱԿԱՆ ԳԻՐ՝ Հ. Յ. Գ. ԲԻԻՐՈՅԻՆ

Խոր ցաւով իմացանք հաւատաւոր դաշնակցական

ԽԱԺԱԿ ՏԵՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

մահուան լուրը: Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք անոր հարապատներուն եւ դաշնակցական համայն ընտանիքին:

Հ. Յ. Գ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

«ԻՆԹԵՐՓՈԼ» — «ԵՆԻՐՈՓՈԼ» ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

«Ինթրփոլ»ը երէկ յայտնեց, որ «Ենրոփոլ»ի հետ համաձայնութիւն գոյացած է՝ տեղեկութիւններ փոխանակելու միջազգային ոճիրներու ներառեալ՝ ահաբեկչութեան մասին:

«Ինթրփոլ»ի ընդհանուր քարտուղար Ռոնըլտ Նոպլը ըսաւ, որ երկու կազմակերպութիւնները մէկդի դրած են իրենց տարակարծութիւնները եւ որոշած գործակցիլ՝ պայքարելու համար ահաբեկչութեան եւ այլ ծանր ոճիրներու դէմ: «Երբ ոստիկանները գործակցին, չարերը կը պարտուին», աւելցուց ան:

Նոպլը նախապէս ըսած էր, որ «Ինթրփոլ» պետք է բարեկարգումներու ենթարկուի. եթէ կ'ուզէ յաջողիլ ահաբեկչական խմբակներու դէմ իր պայքարին մէջ:

(ՌԵՅԹԸՂ)

ՄԻՆԵՍԵԱՆ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՀԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՊԱՊԸ ԱՅՑԵԼԵՅ ԾԻԾԵՈՆԱԿԱՐԵՐԴ

Յովհաննէս Պօղոս Բ. պապը, երէկ, Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընկերակցութեամբ այցելեց Ծիծեռնակաբերդի, յարգանքի տուրք մատուցելու Հայկական Ցեղասպանութեան զոհերու յիշատակին:

Պապը ծաղկեպսակ գետեղեց Ծիծեռնակաբերդի մէջ: Ապա կատարուեցաւ հոգեհանգիստ: Ան անգլերէնով իր աղօթքին մէջ «Ցեղասպանութիւն» եզրին փոխարէն հայերէնով արտասանեց «Մեծ եղեռն» բառերը: Հոգեհանգիստի վերջաւորութեան Շարլ Ազնաւուր մեկնարանեց իր «Առաքիւ» երգը:

Արարողութեանէն ետք պապը օրհնեց յուշահամա-



Պապը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ծիծեռնակաբերդի մէջ:



Պապը կ'ընդունուի Գալաթի Զոհարեանի կողմէ:

Իրի պարտէզին մէջ իր անունով ցանուած եղեռնին: Պապը նաեւ օրհնեց Պենետիկտոս 13րդ պապի յուշաքարը: Պենետիկտոս պապը 10 Սեպտեմբեր 1915ին համակ մը յղած էր Մոհամէտ Ե. Սուլթանին, իր բողոքը արտայայտելով հայկական կոտորածներուն նկատմամբ: Յովհաննէս Պօղոս Բ. պապը Պենետիկտոս պապի դիմանկարը եւ անոր նամակին բնագիրը նուիրեց Հայկական Ցեղասպանութեան թանգարանին:

Յովհաննէս Պօղոս Բ. պապը եւ Ամենայն Հայոց

Շարք՝ էջ 2

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ «ԱԶԴԱԿ»Ի ԲԱՑԱՌԻԿԸ

ԱԶԴԱԿ



ՆՈՒՐՈՒՄԸ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ 10ԱՄԵԱԿԻՆ

ՍՈՒՐԻԱ ԿԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԷ
ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ
ԻՆԹԻՖԱՏԱՑԻՆ
ԻՐ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԴԱՄԱՍՍԿՈՍ, 26 (ՌՈՅԹԸՐԶ)․– Սուրիոյ պաշտպանութեան նախարար Կօր. Մուսթաֆա Թլաս Չորեքշաբթի օր տեսակցութիւն ունեցաւ պաղեստինեան արմատական շարժումի մը ղեկավարին հետ, յայտնեց պաղեստինցի բաները մը։

Բաները ըսաւ, որ Պաղեստինի Ապստաբութեան Ժողովրդավար Ճակատի (ԷՖ. Տէ. Էլ. Փէ.) ղեկավարին՝ Նալիֆ Հաուաթմէի հետ հանդիպումին ընթացքին, Թլաս անգամ մը եւս Կօրավիգ կանգնած է պաղեստինեան միամեայ ըմբոստութեան։

Թլաս դատապարտած է Միացեալ Նահանգներու դէմ կատարուած յարձակումները, դիտել տալով սակայն, որ պէտք է յստակ տարբերութիւն մը դրուի բռնագրաւող օտար ուժին դէմ պայքարին ու ահաբեկչութեան միջեւ։

Սուրիա կը գտնուի ահաբեկչութեան Կօրավիգ կանգնող երկիրներու ցանկի մը վրայ, որ պատրաստուած է Միացեալ Նահանգներու կողմէ։ Սուրիա ապաստան տուած է պաղեստինեան արմատական քանի մը շարժումներու։

ԹՈՒՐԲԻԱ

ՈՒԺԱՆԻԹԻ ՄԱՐԶԻՆ
ԾՐԱ ԳԻՐՆԵՐԸ
ՊԻՏԻ ԶՍԱՌԵՑՈՒՄ

Թուրքիոյ ուժանիւթի նախարար Ջէքի Չաքան յայտնեց, որ ուժանիւթի մարկի բազմամիլիար տոյար արժողութեամբ ծրագիրները պիտի շարունակուին, նոյնիսկ եթէ ամերիկեան վրէժխնդրական հակահարուած մը ապակալունացնէ շրջանը։

Չաքան ըսաւ, որ Պաքու – ձէյհան քարիւղատարի, Կապոյտ Կապի եւ Իրանեան Կապի ծրագիրները պիտի շարունակուին, նոյնիսկ եթէ պատերազմ ծագի շրջանին մէջ։

Վերոնշեալ ծրագիրներուն մէջ ներդրում կատարած են արեւմուտքի գործարարներ, որոնք ցարդ ոչ մէկ մտահոգութիւն յայտնած են. ըստ Չաքանի։

Կը նախատեսուի, որ Պաքու – ձէյհան քարիւղատարին շինութիւնը աւարտի 2.5 տարիէ։ Կապոյտ Կապի ծրագիրին գործադրութիւնը կը հետապնդուի ռուսական «Կապիրում» եւ իսրայէական «Էնի» ընկերութիւններուն կողմէ։ Ներկայիս հսկայական խողովակներ կը պետեղւին Սեւ ծովուն յատակը Ռուսիայէն մինչեւ Թրքական հողեր։ Իսկ Իրանեան Կապի ծրագիրին պարագային, Թրքական կողմը կը սպասէ, որ Իրան աւարտէ մղումի կեդրոնի մը կառուցումը, որպէսզի կարելի ըլլայ կապի փոխադրութեան սկսիլ։

(ՌՈՅԹԸՐԶ)

ՍԵՌԵՍԿԱՆ ԱՐԱՐՈՅ ՄԵԶ

ԱՖՂԱՆ ՄԸ ԿԸ ԳԼԽԱՏՈՒԻ

ՏՈՒՊԱՅ, 26 (ՌՈՅԹԸՐԶ)․– Սփռտական Արաբիա Չորեքշաբթի օր գլխատեց աֆղան մը, որ մահապատիժի դատապարտուած էր հերոքին մաքսանենգած ըլլալու յանցանքի համար, յայտնեց ներքին գործոց նախարարութիւնը։

Նախարարութեան կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կը նշէր, որ գլխատումը տեղի ունեցաւ Ռիատի մէջ։

Այս տարուան ընթացքին 74 հոգի մահապատիժի ենթարկուած է Սփռտական Արաբիոյ մէջ, ուր խստութեամբ կը կիրարկուի իսլամական օրէնքը՝ շարիա։

ԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ԿՈՋ՝ ԵՄԷՆԷՆ

Եմէն կոչ ուղղեց արաբ ղեկավարներու արտակարգ վեհաժողովի մը. քննարկելու համար ահաբեկչութեան դէմ կռիւն ու իսրայէլեան յարձակողական քաղաքականութիւնը պաղեստինցիներուն հանդէպ։ Նախագահ Ալի Ապտալլա Սալէի ըսաւ, որ անհրաժեշտ է խորհրդակցութիւնը արաբ ղեկավարներուն միջեւ՝ որոշելու համար արտակարգ վեհաժողովին կայացումը։

Սալէի դիտել տուաւ, որ այս հանգրուանին անպայման պէտք է կայանայ վեհաժողով մը, որովհետեւ Իսրայէլ կը շարունակէ յարձակողական քաղաքականութիւնը պաղեստինցիներուն դէմ։ Ան աւելցուց, որ վեհաժողովը պէտք է քննարկէ նաեւ Միացեալ Նահանգներուն դէմ կատարուած ահաբեկչական գործողութիւնները։ Սալէի կոչ ուղղեց միացեալ ճիգերու՝ պայքարելու համար համաշխարհային ահաբեկչութեան դէմ, դիտել տալով սակայն, որ յստակ պէտք է ըլլայ տարբերութիւնը ահաբեկչութեան ու անկախութեան համար մղուող պայքարներուն միջեւ։ Սալէի կոչ ուղղեց նաեւ, որ Միացեալ Նահանգներ վերջ տան Իսրայէլի կառավարութեան որդեգրած միջոցառումներուն, որոնք կը միտին բնաջնջել պաղեստինցի ժողովուրդը։

(ՌՈՅԹԸՐԶ)

ԵՒՐՈՊԱ ՊԵՏԵՒ Է ՀԱՄՈՉՈՒԻ

ՌՈՒՍԻԱ ԽԱՂԱՂԱՍԵՐ
ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐ ՄԸՆ Է

Կ'ԸՍԷ ԻՏԱԼԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԸ



Փութին եւ Պերլուսքոնի։

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին երեկ գովասանքի արժանացած է Իտալիոյ եւ Գերմանիոյ կողմէ, ինչպէս նաեւ աւելի մեղմացած արտայայտութիւններ լսած՝ անջատողական Չէչենիոյ գծով։

«Եւրոպա պէտք է բացուի Ռուսիոյ», ըսած է Իտալիոյ վարչապետ Սիլվիօ Պերլուսքոնի մամլոյ ասուլիսի մը ընթացքին. Պերլինի մէջ տեսակցութիւն մը ունենալի ետք Փութինի հետ՝ ահաբեկչութեան դէմ պայքարի հարցը քննարկելու համար։

«Եւրոպա պէտք է համոզուի, որ ինչպէս Փութին երեկ նշեց Պոնտըշթակի մէջ իր խօսքին ընթացքին, Ռուսիա խաղաղասէր երկիր մըն է, խաղաղասէր եւրոպական երկիր մըն է», ըսած է ան։

Պերլուսքոնիի հետ 45 վայրկեան տեւողութեամբ Փութինի տեսակցութիւնը անոր առիթ տուած է արեւմտեան յաւելեալ Կօրակցութիւն ապահովելու՝ Մոսկուայի խոստումին հանդէպ, միասալու Մ. Նահանգներու «ահաբեկչութեան դէմ պատերազմին», Նիւ Եորքի եւ Ուաշինկթընի մէջ երկու շաբաթ առաջ տեղի ունեցած անձնասպանական գործողութիւններէն ետք։

Փութին երկուշաբթի օր Կօրակցութիւն արտայայտած էր Աֆղանիստանի իշխող թալեպաններուն դէմ պայքար մղող Հիսսայիսի Դաշնակցութեան հանդէպ, ինչպէս նաեւ Մոսկուա յայտնած է, որ Տաճիկիստան կրնայ Ուաշինկթընի արտօնել, որ իր գլխաւոր ռաքայանը օգտագործէ։

Պերլինի մէջ, ռուս ղեկավարը նման գոր-

ծակցութեան մը դիւանագիտական արդիւնքը սկսած է տեսնել. Արեւմուտքի այն ակնարկութեան ետք, թէ աւելի մեղմ կեցուածք պիտի ցուցաբերէ Չէչենիոյ մէջ անջատողականներու դէմ Մոսկուայի պայքարին հանդէպ։

Գերմանիոյ վարչապետ Կերհարտ Շրէյտըրը Պերլուսքոնիի հետ միացեալ մամլոյ ասուլիսի մը ընթացքին դիտել տուած է. «Գիտէք, որ Չէչենիան մաս կը կալմէ շրջանի մը, ուր գոյութիւն ունի մագլցում արձանագրած սպառնալիք մը, որուն այժմ մենք եւս փորձառութիւնը ունենանք։ Ռուսիոյ քաղաքականութեան տարբերեաները ըստ այնմ պէտք է դատուին», շեշտած է ան։

Մ. Նահանգներ եւ Եւրոպա երկար առնէն ի վեր կը քննարկուեն Մոսկուան Չէչենիոյ մէջ անոր վիճակը արշաւին համար, կոչ ուղղելով անոր, որ քննութիւն բանայ մարդկային իրաւանց բռնաբարումի պարագաներու շուրջ։ Այդ կեցուածքը կը թուի փոխուած ըլլալ յարձակումներէն ետք։

Մ. Նահանգներու

արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլը երկուշաբթի օր հասկացողութիւն արտայայտած է Չէչենիոյ մէջ անջատողականներու դէմ Մոսկուայի պայքարին հանդէպ։

ՄԱՍԽԱՏՈՎ
ԿԸ ԵՐԱՇԱՆԳԷ
ՌՈՒՍԱԿԱՆ
ԹԻՐԱՆՆԵՐ ՀԱՌՈՒՄԵՆ

Միւս կողմէ, չէչէն անջատողականներու «Չէչէնիփրէս» լրատու գործակալութիւնը հաղորդած է, թէ չէչէն ըմբոստ նախագահ Աւլան Մալխատով իր միաւորներուն հրահանգած է Ռուսիոյ մէջ ռուսական ուժերն ու բանակային կեդրոնները հարուածել։

Սեպտեմբեր 1ին արձակուած է Սեպտեմբեր 25ին հրապարակուած հրահանգը յստակօրէն կ'արգիլէ չէչէն վիճակներուն քաղաքային թիրախներու վրայ յարձակիլ եւ քաղաքայիններու վնաս հասցնել։

Մասխատով արգիլած է նաեւ չէչէն վիճակներու գործողութիւններու ձեռնարկել Հայաստանի, Վրաստանի եւ Ալկարյէճանի մէջ։

ԹՈՒՐԲԻԱ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ ՄԸ
ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ
ՓՈԽԵԼՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Թուրքիա քայլերու դիմեց քրտերէնի գործածութեան դէմ արգելքը վերացնելու եւ՝ մարդկային իրաւանց խոցելի մարդը բարելաւելու համար։

Խորհրդարանը փոփոխութեան ենթարկեց սահմանադրութեան կարգ մը յօդուածներ, որոնք սահմանափակումներու կ'ենթարկէն երկրի տարածքին քրտերէնի գործածութիւնը։ Անիկա նաեւ քննարկեց մարդկային իրաւանց մարդի բարելաւման միտող յօդուածներ, որոնց վաւերացումը Անգարան Եւրոպական Միութեան անդամակցելու չափանիշներուն աւելի պիտի մօտեցնէ։

Վաւերացուած յօդուածներէն մէկը չորս օրերու կ'իջեցնէ առանց ամբաստանութեան ձերբակալուածները բանտարկելու պայմանաժամը։ Չորս օր ետք, ենթական կամ պէտք է ապատ ձգուի, կամ անոր դէմ ամբաստանագիր հրապարակուի։ Այլ յօդուած մը վերցուց թրքերէնէ այլ լեզուով հրատարակութիւններու դէմ դրուած արգելքը։

Թրքական խորհրդարանը յառաջիկայ օրերուն պիտի քննարկէ մահապատիժի պարագան։ Ըստ մեկնաբաններու, մահապատիժի պիտի ենթարկուին ահաբեկչութեան յանցանքով դատապարտուածները։

Կը նախատեսուի, որ քննարկումները եւ վաւերացումները աւարտին առնուապ մէկ շաբաթէն։

(ՌՈՅԹԸՐԶ)

ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ
ԵԳԻՊՏՈՍ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

ԹԵՀՐԱՆ, 26 (ՌՈՅԹԸՐԶ)․– Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ խարպի յառաջիկայ շաբթուան մէջ Եգիպտոս պիտի այցելէ, տեսակցութիւններ ունենալու համար եգիպտացի պաշտօնատարներու հետ, հաղորդեց իրանեան աղբիւր մը։

Յիշեալ աղբիւրը աւելցուց, որ խարպիի Եգիպտոս այցելութիւնը կ'իյնայ միջինարեւելեան երկիրներու շրջապտոյտի մը ծիրէն ներս։ Ան ըսաւ, սակայն, որ Գահիրէ այցելութեան օրը տակաւին յստակ չէ։

Խարպիի Եգիպտոս այցելութեան լուրը հաստատեց եգիպտական «Ահրամ» օրաթերթը, որ հաղորդեց, թէ խարպի պիտի մասնակցի Իսլամական խորհրդաժողովի Կապմակերպութեան անդամ երկիրներու արտաքին գործոց նախարարներու արտակարգ ժողովին։

Իրան Եգիպտոսի հետ կապերը իսկեց 1979ի իսլամական յեղափոխութենէն ետք։ Իրանի գերագոյն ղեկավարը՝ ալաթոլլա խոմէյնի, դատապարտած էր Եգիպտոսը Իսրայէլի հետ ստորագրած Քէմփ Տէյլիի իսլաղութեան համաձայնագիրին համար։ Իսլամական յեղափոխութեան կողմէ գահընկեց եղած շահն ալ Եգիպտոս ապաստանեցաւ ու ի՞նչ ալ մահացաւ։ Մնցնող քանի մը տարիներուն Թեհրան – Գահիրէ կապերը սկսան բարելաւում արձանագրել, սակայն դիւանագիտական կապերը տակաւին չեն վերահաստատուած։

ՖՐԱՆՍԱՆԻ ՀԱՄԱՐԻՄ ԱԼՇԵՐԻՅՅԻՆԵՐՈՒ
ԴԷՄ ԳՈՐԾՎԵՐԻՄԸ ԶԱՐԴԵՐՈՒՆ ԳԾՈՎ

ԺԱՔ ՇԻՐԱՔ
ԿԸ ԽՈՍՏՈՎԱՆԻ ՖՐԱՆՍԱՅԻ
ԱՆԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Նախագահ Ժաք Շիրաք ֆրանսացի առաջին ղեկավարն է, որ հրապարակաւ խոստովանեցաւ, թէ Ֆրանսա չէ յաջողած արգիլել բարբարոս արարքները այն ալճերիացիներուն դէմ, որոնք Ֆրանսայի կողքին կոռուած են ափրիկեան երկիրներու անկախութեան պատերազմին (1954-1962)։

Երբ ֆրանսական ուժերը պարտուած հեռացան Ալճերիայէն 1962ին, ալճերիացի յաղթական յեղափոխական ուժերը սպաննեցին հապարտոր ալճերիացիներ ու անոնց ընտանիքները, որովհետեւ անոնք հաւատարիմ եղած էին Ֆրանսայի։ Շիրաք ըսաւ, որ Ֆրանսա չկրցաւ արգիլել այդ ջարդը ու չյաջողեցաւ փրկել իրեն հաւատարիմ մնացածները։ Շիրաք աւելցուց, որ ժամանակը հասած է, ուր Ֆրանս

Շար.ը՝ Էջ 10

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ
ԳՐԱՍԵՆԵԱԿԻ
ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

Երեսփոխանական Գրասենեակը 1 Հոկտեմբեր 2001էն սկսեալ այցելուներ կ'ընդունի ամէն օր կէսօրէ առաջ ժամը 10:00էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 4:00 եւ ամէն երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը կէսօրէ ետք ժամը 4:00էն մինչեւ 6:00, «Շաղկոյեան» Կեդրոնի իր գրասենեակին մէջ, հեռաձայն 01-259881 եւ 01-242582։



Կնոջական

ՆՈՐԱԶԵԻՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՒ ՏԱՔՑՆՈՂ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ

Ճիշդ է, որ օդը տակա-
ւին լիրանանցի կիներ չի
քաջալերեր մտածել յա-
ռաջիկայ ձմրան նորաձե-
ւույթի մասին, բայց
այսուհանդերձ կ'արժե
զադուփար մը կազմել, թէ
օրուան ընթացքին աշ-
խատող կիներ ի՞նչ պիտի
կրէ, որպէսզի թէ՛ նորա-
ձեւութեան հետ քայլ պա-
հէ եւ թէ իր կրածը գործ-
նական եւ տաքցնող ըլ-
լայ:

երկար բաճկոն մը եւ ար-
ւեստակա՛ն մուշտակ
վզկապ մը, որ բարակ
գօտիով մը ամրացուած է
բաճկոնին: Հոս նշենք, որ
արուեստական մուշտա-
կը յաճախ պիտի զարդա-
րէ վերարկուներուն,
բաճկոններուն եւ նոյ-
նիսկ բրդեղէններուն
օձիքները:



- Թիւ 2 նկարին մէջ կը տեսնենք բուրդէ պլուզ մը: Ընդգծենք, որ բրդե-

ղէնները նախորդ տարի-
ներու նման լայն եւ եր-
կար չեն, վերջին մէկ-եր-
կու տարուան օրինակով,
անոնք կարճ եւ մարմնին
փակած են եւ անոնց
օձիքները յաճախ քօլ ուու-
լէ են:

- Թիւ 3 նկարին մէջ կը նկատենք, որ լոզանժ,



ժաքար բրդեղէնները նո-
րոյթ է, նոյնպէս ալ՝
տաքատները, որոնք եր-
բմն նեղ, երբեմն ալ փաթ-
տ էլեֆանտ են:

Նորոյթ են նաեւ գա-
նազան ձեւի գլխարկնե-
րը:

- Թիւ 4 նկարը ցոյց
կու տայ, թէ դասական
քիչ մը երկար բաճկոնը
եւս նորոյթ է: Զայն կա-
րելի է կրել փէշի կամ
տարատի վրայ:

Հոս ես բուլիտ
գլխարկ մը յաւելեալ վա-



յելլութիւն կու տայ բաճ-
կոնին:

- Թիւ 5 նկարը կրկին
ու կրկին կը հաստատէ,
թէ յառաջիկայ ձմեռ
գլխարկը նորոյթ է, նոյն-
պէս ալ՝ բրդեայ քրուա-
զէ երկար բաճկոնը, որ
մէջքին հաստատուած է
բրդեայ լայն գօտիով մը:



Զմռանը նաեւ փիե տը
քոք կամ փիե տը փուլ
կերպար բաճկոններու,
բրդեղէններու, վզկապ-
ներու եւ նոյնիսկ ար-
ւեստաւորներու պատ-
րաստութեան մէջ:

Նկարին մէջ կը տես-
նենք փիե տը քոք պայու-
սակ մը:

ՆԵՐՔԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

Հեւքի մէջ գտնուող մայրերուն
թիւը անսահման է: Ամբողջ օրը աջ
ու ձախ վազող տան եւ դուրսի դու-
րէնը հաւասարապէս լաւ կատարող
եւ իրենց լաւագոյնը տուող մայրե-
րը անհամար են...

Բայց օրուան աւարտին արդեօք
մեզմէ իւրաքանչիւրը իր տան մէջ,
իր անկիւնը ներքին խաղաղութիւն
մը չի՞ փնտռեր. անկասկած որ՝ այո՛.
ուրեմն հետեւեցէք այս քանի մը թե-
լադրանքներուն:

1.- ՀՊԱՐՏԱՅԷՔ ԴՈՒՔ ԶԵՁՄՈՎ

Եթէ աշխատող մայր էք, մերթ ընդ
մերթ շնորհաւորեցէք դուք ձեզ՝ ձեր
կատարած իրագործումներուն հա-
մար: Երախտապարտ եղէք, որ
առողջ էք, ձեր զաւակները լաւ կը
մեծցնէք եւ ձեր գործերը լաւ կը կատարէք: Այս բո-
լորը ներքին խաղաղութիւն մը կը պարգեւեն ձեզի:

2.- ԵՐԲԵՄՆ ԴՈՒՔ ԶԵՐ ՄԱՍԻՆ ՄՏԱԾԵՑԷՔ

Հանգիստի ժամը պարտադիր պէտք է ըլլայ: Օր-
ւան ընթացքին քանի մը ժամ տրամադրեցէք դուք ձե-
զի: Կարգացէք, երաժշտութիւն ունկնդրեցէք եւ կամ
պարզապէս երկարեցէք առանց բան մը ընելու: Այս
պահերը շատ անհրաժեշտ են ներքին խաղաղութեան
համար:

3.- ԳՆԱՀԱՏԵՑԷՔ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Առանց փոփոխութեան հոլովոյթ չկայ, իսկ առանց
հոլովոյթի՝ կեանք չկայ:

Երբ որ առիթը ներկայանայ, նոր բան մը ըրէք:
Այսպէս, նոր կարկանդակ մը փորձեցէք կամ նոր
մարզաձեւ մը կիրարկեցէք, նոր լեզու մը սորվեցէք...:
Շատ արագ պիտի անդրադառնաք, որ եթէ դուք
ձեր վրայ վստահութիւն ունենաք, ներքին տազնապ-
ներն ու մտահոգութիւնները պիտի չքանան:

4.- ԲԱՆԱՐԱՐ ՔՆԱՅԷՔ

Գիշերային լաւ քուն մը ֆիզիքապէս եւ հոգեպէս
կը կազդուրէ: Եթէ քնանալու դժուարութիւն ունիք,
ոչ յոգնեցուցիչ մարզանք մը կիրարկեցէք եւ երբեք
մի՛ մտածէք քնաբեր դեղերու մասին:

5.- ԴՈՒՔ ԶԵՁ ԵՐՁԱՆԿԱՅՈՒՅԷՔ

Ձանացէք դուք ձեզի եւ ձեր շուրջիններուն հա-
մար հաճոյքի պահեր ստեղծել՝ պզտիկ զննմաներ կա-
տարելով, մագի յարգարանքը փոխելով, բարեկամնե-
րու միջեւ հաւաքոյթ մը կազմակերպելով...

Ահաւասիկ՝ ոչ դժուար միջոցներ հոգեկան ներ-
դաշնակութիւն ստեղծելու եւ ներքին խաղաղութիւն
պարգեւելու համար: Այժմ եկէք ճանշանք, թէ որ-
քան հոգեպէս խաղաղ անձ մըն էք:

ՓՈՐՁ - ՀԱՐՑԱՐԱՆ

- 1 -

Դպրոցէն արձակման ժամը տակաւին հասած է, եւ
դուք ժամանակ առաջ դպրոցի մուտքին կը սպա-
սէք ինքնաշարժին մէջ:

ա.- Ձայնասփիւռ մտիկ կ'ընէք, սպասելով արձակ-
ման զանգը:

բ.- Ձեր աչքերը կը փակէք եւ կը փորձէք հանգըս-
տանալ:

գ.- Ինքնաշարժէն կ'իջնէք եւ այլ ծնողներու հետ
կը զրուցէք:

- 2 -

Ժամանակէ մը ի վեր բարեկամուհիի մը պարտք
մը ունիք այդ պատճառով ձեր քունը փախցուցած էք:
ա.- Գիշերը կ'արթննաք եւ համացանցի վրայ անը-
նութենէ տառապող այլ անձերու հետ կը շատախո-
սէք:

բ.- Ծրագիր մը կը մշակէք օրական գումար մը
խնայելու եւ ձեր պարտքը փակելու համար:

ԿՈՒԶԵՄ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՄԴ
ՓՈԼԻԿԼՕԹ
ԹԵՔՆԻԲԸԸ ՔՈԼԵԾ

- Business Administration
- Computer
- Marketing
- Teaching Diploma
- Դիտակաճ վկայական T. S (B. A.)
- Մատչելի կորսորչակ եւ վճարման դի-
րուքին
- Ցերեկային եւ գիշերային դասարաններ
- Անգլերէն եւ ֆրանսերէն բաժններով

Արձանագրութիւն ամէն օր
ՓՈԼԻԿԼՕԹ ԹԵՔՆԻԲԸԸ ՔՈԼԵԾ,
Տորա, հեռ. 01 - 251320 եւ 03 - 299484:
ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԵՆ ՊԵՏՐՈՍ ԶԵՄԵՍԵԱՆ

գ.- Քնաբեր դեղահատ մը կը
կլլէք չմտածելու համար:

- 3 -

Արթիւրի պատճառով քանի մը քի-
յօ գիրցած էք:

ա.- Առաւօտ կանուխ կ'արթննա-
նաք թեթեւ նախաճաշ մը պատրաս-
տելու համար:

բ.- Կը նեղանաք, բայց նիհարնա-
լու ճիգ չէք ընել:

գ.- Կ'երթաք եւ անելի մեծ չափի
հագուստներ կը գնէք:

- 4 -

Ծրագրած էք ինքնաշարժ մը
դնել, սակայն նիւթական դժուար-
ութիւններ ունիք:

ա.- Ձեր գլուխը պատէ պատ կը գարնէք յարմար
ինքնաշարժ մը գտնելու համար:

բ.- Արդէն իսկ դուք ձեզ կ'երեւակայէք ձեր երա-
գային ինքնաշարժին դեկին առջեւ նստած:

գ.- Կը սպասէք, որ ձեր նիւթական վիճակը բարե-
լաւուի, որպէսզի ինքնաշարժը գնէք:

ԱՐԴԻՒՆՔ

● Եթէ հարցումներուն մեծամասնութեան «ա»
պատասխանեցիք, չափազանց տազնապող անձ էք:

● Եթէ «բ» պատասխանեցիք, շնորհաւորութիւն-
ներ... հոգեկան եւ մտային ներդաշնակութեան տէր
անձ էք:

● Եթէ «գ» պատասխանեցիք, քիչ մը շատ պաղա-
րիւն եւ անտարբեր էք:

ՍՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ

ՆԱԽԱՃԱՇԸ

Շատ մը բժիշկներու եւ սննդագէտներու կարծի-
քով, օրը լաւ սկսելու նախապայմաններէն մէկը հա-
ւասարակշռուած նախաճաշ մը ընելն է:

Սակայն թէ՛ փորքերը, թէ՛ մեծերը առաւօտուն ո՛չ
ախորժակ եւ ոչ ալ բաւարար ժամանակ կ'ունենան
սեղանի մը շուրջ նստելու եւ այլազան նախաճաշ մը
ուտելու:

Մասնագէտի կարծի-
քով, կան 10 հնարներ
առաւօտեան ախորժակ
ունենալու եւ նախաճաշե-
լու համար:

1) Նախօրեակին ընթ-
րիքը թող ըլլայ թեթեւ եւ
ժամը 9էն առաջ:

2) Սովորականէն 15
վայրկեան կանուխ
արթննալ՝ նախաճաշելու
տրամադրութեան մէջ
մտնելու համար:

3) Պատուհանները լայն բանալ եւ խորունկ շնչել:
4) Թերթը կարդալ եւ մարզանքի քանի մը շարժում
կատարել:

5) Լոգանք մը առնել՝ թարմանալու համար: 6) Բա-
ժակ մը ջուր կամ թարմ պտուղի հիւթ խմել:

7) Առաւօտ կանուխ հաց կարմրցնել (առանց ալ-
րելու)՝ տան մէջ տաք հացի անուշ բոյրը տարածելու
համար:

8) Ախորժաքեր եւ զուարթ սեղան մը պատրաստել:

9) Այլազան ուտելիքներ (անուշ, թանձր մածուն,
պանիր, հացահատիկ, պտուղ, խոզապուխտ...) ներ-
կայացնել սեղանին վրայ:

10) Սեղանին շուրջ բոլորուիլ ընտանեօք, առանց
պատկերասփիւռի, հիւրընկալ միջոցառում մը ստեղծե-
լու համար:

ՍԽԱԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ ՆԱԽԱՃԱՇԻՆ ՄԱՍԻՆ

- 1 -

Նախաճաշը օրուան ամէնէն կարեւոր ժամն է:

ՍԽԱԼ: Զկան կարեւոր եւ անկարելի ժամեր: Եթէ
սննդագէտները կը շնորհակալանաք ինքնաշարժի կարեւորու-
թիւնը, պարզապէս անոր համար, որ անիկա կ'օգնէ
օրը լաւ սկսելու:

- 2 -

Անգլիական նախաճաշը (հաւկիթ, պէյքլըն, հացա-

հատիկ, բոսք եւ պտուղ) լաւագոյն նախաճաշն է:

ՍԽԱԼ: Բացի եթէ առիթը չունիք կէսօրին ճաշելու
եւ կամ կ'ապրիք Անգլիա, ուր կէսօրին շատ քիչ կ'ու-
տեն, իսկ երեկոյեան ժամը 6:00ին կ'ընթերցեն:

- 3 -

Նախաճաշը անհրաժեշտ է նիհարնալու համար:

ՍԽԱԼ: Նիհարնալը նախաճաշին հետ ոչ մէկ կապ
ունի. անիկա կախալ է օրուան ընթացքին որդեգրու-
ած թեթեւ, հաւասարակշռուած եւ այլազան սննդա-
կանոնէն:

- 4 -

Խորունկ աման մը հացահատիկը խալընտրելի է
կարագով հացին:

ՍԽԱԼ: Կերէք այն, ինչ որ կը փափաքիք, բայց խու-
սափեցէք քրուասացի ընտանիքին պատկանող ուտե-
լիքներէն: Ամբողջովին մի՛ ջնջէք կարագը, ոչ ալ՝ շա-
քարը, բայց չափաւոր սպառեցէք զանոնք:

Պատրաստեց՝ ԶՈՒԾԻԿ ՍԱԽՄԱԳԱԼԵԱՆ

ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ.

❖SONY

❖TOSHIBA

❖PANASONIC

❖SHARP

❖PHILIPS

❖SAMSUNG

❖PIONEER

❖MEC

❖GENERAL ELECTRIC

❖WHITE WESTINGHOUSE

❖KELVINATOR

❖HOOVER

❖BOSCH

❖MOULINEX

❖BRAUN

❖MIELE

ՎՃԱՐՄԱՆ ԳԻՒՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
36 ԱՄՍՈՒԱՆ ՎՐԱՅ
LISTE DE MARIAGE

Պոլոք Համուտ - Զաղաքապետարանի հրապարակ,
ՀԵՌԱԶԱՅՆ՝ 01-241000
Ձեզ մոտը, Սանքըր Պլանքոյէն: Կանադուր պապահովում:

ԱՇԽԱՐՀ ԿՐՆԱՅ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՔԱՆԴՈՒՄԻ ԶԵՆՔԵՐՈՎ...

Շարունակում Ա. ԷջԷՂ

պիտի կանգնին իսլամում-
թեան եւ Պըն Լատենի:

Սակայն Աֆղանիս-
տանի սահմաններուն
վրայ, ՄԱԿ եւ քարեսի-
րական այլ կազմակեր-
պութիւններ իրենց ու-
շաղթութիւնը կեդրոնա-
ցուցած են հոն գտնուող
քաղաքային երու
դժուարութեանց վրայ,
պատրաստուելով 1,5
միլիոն գաղթականներու
հոգի մը:

Փաքիստան երէկ պայ-
քար կը մղէր աֆղան
գաղթականներու առջեւ
իր սահմանը փակ պահե-
լու, սակայն անիկա
յայտնած է, թէ կրնայ
ստիպուած ըլլալ գաշ
բանալու, եթէ շատ աւե-
լի մեծ թիւով աֆղաններ
հասնին՝ հաւանական
պատերազմէ մը խոյս
տալով:

Փաքիստանի նախա-
գահ Փերվիզ Մուշարրաֆ

յայտարարած է, թէ իր
կշիռը դրած է Ուաշինկ-
թընի ետին: Այսուհան-
դերձ ան Երեքշաբթի օր
դարձեալ շեշտած է, թէ
իսլամապատ, որ աշխար-
հի միակ երկիրն է, որ
մեկուսացած շարժումը
կը ճանչնայ, թալեպան-
ներու հետ դիւանագի-
տական կապերը պիտի
պահպանէ:

Սպանացի պաշտօնա-
տարներ երէկ յայտնե-
ցին, թէ ոստիկանու-
թիւնը գտած է իսլամ
ծայրայեղականներու
ընթերցում, որ կապեր ունի
Պըն Լատենի ցանցին
հետ: 6 այճերիացիներ,
որոնք ձերբակալուած են
Երեքշաբթի գիշեր եւ Զո-
րեքշաբթի առաւօտուն
Աֆղանիստանի մէջ
մարդուած են, ըստ պաշ-
տօնատարներուն:

Միւս կողմէ, հիւսի-
սային Իրաքի Քիւրտիս-

տանի Հայրենասիրական
Միութեան խմբակը երէկ
յայտնած է, թէ հիւսիսա-
յին Իրաքեան քաղաքի մը
հակակշիռը ձեռք առած է
իսլամական ուժերէ,
որոնք, ըստ անոր, կա-
պեր ունին Պըն Լատենի
հետ:

Սակայն օտար դէտեր
ըսած են, թէ դժուար է
հաստատել իսլամական
խմբակին եւ Պըն Լատենի
միջեւ կապը:

ԱՄԵՐԻԿԵԱՆ
ՀԱՐՈՒԱԾԵ
ԱՐԴԱՐԱՆԱԼԻ Է,
ԵԹԵ ՓԱՍՏԵՐ
ԳՏՆՈՒԻՆ
Կ'ԸՍԷ ԻՐԱՆ

Միւս կողմէ, Իրան
երէկ յայտնած է, թէ այս
ամսուան անձնասպա-
նական յարձակումնե-
րուն ամերիկեան հակա-
դարձութիւնը արդարա-

նա շեշտած է, թէ եւրո-
պական երկիրները Իրա-
նի պիտի յանձնեն փա-
ստեր՝ ամերիկեան յարձա-
կումներուն գծով:

Միւս կողմէ, Հռոմի
մէջ ամերիկեան դեսպա-
նատան գործակալտար
Ուիլիամ Փոփ Երեքշաբթի
օր Հռոմի մօտ տեսակ-
ցութիւն մը ունեցած է
Աֆղանիստանի նախկին
թագաւոր Մոհամէտ Ջա-
հիր Շահի հետ, «Աֆղա-
նիստանի մէջ կացու-
թեան գնահատումը կա-
տարելու համար»: Ան
1973ին զահրնկէց եղած
է:

ԱՊՐԻ ԿՈՂՍԷ
ԱՇԽԱՐՀԱՌԹԵԱՆ
ՂԵՍ ՊԱՅՔԱՐԸ
ԹԱՓ ԿԸ ՍՏԱՆԱՅ

Մինչ այդ, Ա. Պ. Հա-
սարակապետութեան
գինեալ ուժերու հրամա-
նատարութիւնները երէկ
Մոսկուայի մէջ զուար-
ւած ժողով մը ընթացքին
որոշած են թափ տալ
հաւանական ճիգերուն
միասնական ճիգերուն:
Ժողովին մասնակցած
են ԱՊՀի 9 անդամներու
բանակային հրամանա-
տարներ, որոնք կարգին՝
Հայաստանի, Վրաստա-
նի, Ազրպէյճանի սպայա-
կոյտերու պետերը:

Միւս կողմէ, նախկին
խորհրդային Լիթվանիոյ
արտաքին գործոց նա-
խարարութիւնը երէկ
ըսած է, թէ իր երկրը եր-
կար տեւողութեան վրայ
արտօնութիւն տուած է
Մ. Նահանգներու, որ իր
օդային տարածքը օգտա-
գործեն անհրաժեշտ պա-
րագային:

(ԴՈՅԹԸՐԸ)

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 4967

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ	ՈՒՂԱՇԱՅԵԱՑ
1. Խնկողկուգիկ, բու- ժական բոյս - Այրուրե- նէն:	1. Յանձանձիւ, հայ- թայթի:
2. Ճարտարութիւն - Տակաւի գօտի:	2. Աստուած - Ստե- փան Զօրեանի երկերէն:
3. Բորբոքում - Մի- սաք Մեծարեցի երկե- րէն:	3. Ժամանակի միա- ւոր - Փոխանակ- կրկնուած րազաձայն- ներ:
4. Պատերազմի Աստ- ւած - Փոքր (հակ.):	4. Շողկապ - Կերա- կրուել, մեծնալ:
5. Արական օտար անուն - Նոյն գիրերը - Բուր - Այրուրենէն:	5. Խոշոր - Գլուխը կախ՝ ծոռնորդի - Յետոյ:
6. Ուշադրաւ - Յրան- սական քաղաք:	6. Փոխաթ - Չարալուչ, քինախոյր:
7. Դժպէտ, անհաճոյ:	7. Տաղաչափեալ քեր- թուած:
8. Հինտու կրակի աստուածը - Տարածքի միաւոր - Հարկերամեակ:	8. Դաշխուրան, կաւէ տափակ անօթ - Խոշոր կապոյ:
9. Կրկնուած րազա- ձայններ - Շանի - Թա- սէ:	9. Որոգայթ - Պան- դիտանայ:
10. Անձնական դերա- նուն - Դէպք:	10. Տեղատարափ անձը- րեւ - Ասպ - Փոչիացած քարեղէն:
11. Թոնիրի ակր փակե- լու խցան - Գեղմ:	11. Գինդ - Ուրիշին կամքը գործադրող:

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
2	3	4	5	6	7	8	9	10	11	12
3	4	5	6	7	8	9	10	11	12	13
4	5	6	7	8	9	10	11	12	13	14
5	6	7	8	9	10	11	12	13	14	15
6	7	8	9	10	11	12	13	14	15	16
7	8	9	10	11	12	13	14	15	16	17
8	9	10	11	12	13	14	15	16	17	18
9	10	11	12	13	14	15	16	17	18	19
10	11	12	13	14	15	16	17	18	19	20
11	12	13	14	15	16	17	18	19	20	21

ԹԻԻ 4966

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

Win up to \$15,000 in prizes

Peugeot 206
Trip to Cyprus for 2 persons (6 nights)
2 FUJITSU air condition
2 General Electric washing machine
Sony HI FI DX5
Philips DVD 711 with zoom
Panasonic TV 21 inch
Sony TV 21 inch
Continental oven



ՀԱՐԵՅԷ 15,000 ՏՈԼԱՐԻ ԱՐԺԷՔԱԻՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ

Peugeot 206 ինքնաշարժ մը
2 անձի Կիպրոս ձամբորդութիւն (6 գիշեր)
2FUJITSU էր քոնտիսիոնէ
2 General Electric լուացքի մեքենայ
Sony հայ ֆայ DX5
Philips DVD 711 գունով
Panasonic հեռատեսիլ 21 ինչ
Sony հեռատեսիլ 21 ինչ
Ընթրիններ փուռ

ԱԶԳԱԿ

ՀԵՐ. 258526 - 260115 - 241274
ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏ

AZTAG

TEL: 258526 - 260115 - 241274 E. MAIL: aztag@inco.com.lb
FAX: 258529 P.O.BOX: 80860 BOURJ HAMMOUD

ՀԵՐ. 258526 - 260115 - 241274
ՀԵՐ. 258529 P.O.BOX: 80860 BOURJ HAMMOUD

ازتک: ٢٥٨٥٢٦ - ٢٦٠١١٥ - ٢٤١٢٧٤
فاکس: ٢٥٨٥٢٩ ص.ب: ٨٠٨٦٠ بروج حمود